Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019 թվականի հոկտեմբերի 14-16-ը, Շվեդիայի Թագավորություն

4. Հրավիրող կողմը.

Շվեդիայի Յոնկոպինգ նահանգի տարածաշրջանային գործադիր խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանդիսացել եմ Շվեդիա կատարած ճանաչողական այցի ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակության ղեկավար: Այցի նպատակն էր ծանոթանալ Շվեդիայի առողջապահական համակարգին, ինչպես նաև ամրապնդել երկար տարիների գործող համագործակցությունը, զարգացնել երկկողմ հարաբերությունները առողջապահության և բժշկական կրթության ոլորտներում, հաստատել համագործակցության նոր ուղղություններ:

6. Քննարկված թեմաները.

Այցի ընթացքում շվեդական կողմը ներկայացրեց առողջապահական համակարգի իրենց մոդելը, բարեփոխումներն ու ծրագրերը, առողջապահական ոլորտի ֆինանսավորման ուղղությունները, ինչպես նաև հիվանդանոցային խնամքից տնային խնամքի անցման օրինակները:

Այցի շրջանակներում հարցազրույց տվեցի տեղի լրատվամիջոցներին՝ խոսելով առողջապահությանն առնչվող տարբեր թեմաների մասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում երկկողմ հանդիպումներ տեղի ունեցան Շվեդիայի առողջապահական ոլորտի տարբեր ներկայացուցիչների հետ: Մասնավորպես՝ հանդիպեցինք Յոնկոպինգ նահանգի ղեկավարության, ինչպես նաև առողջապահության համակարգի ղեկավար կազմի հետ:

Շրջայց կատարեցինք տարբեր բժշկական հաստատություններ, ինչպես նաև կլինիկական միկրոբիոլոգիական լաբորատորիա: Շվեդական կողմը ներկայացրեց մոր և մանկան հիվանդանոցային և արտահիվանդանոցային խնամքի կազմակերպման ձևերը: Ծանոթացանք հակաբիոտիկների կայունության դեմ պայքարի ոլորտում շվեդական ռազմավարական ծրագրին:

Յոնկոպինգի համալսարան կատարած այցի ընթացքում քննարկվեցին բժշկական կրթության և գիտական հետազոտությունների, ինչպես նաև բուժքույրական կրթության ոլորտներում հնարավոր համագործակցության ուղղությունները:

Այցի շրջանակներում հանդես եկա ելույթով՝ հայտնելով հայկական կողմի հետաքրքրվածությունը համագործակցելու առողջապահության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ հանրային առողջապահության, բժշկական կրթության, բժշկական ապահովագրության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ դեմ պայքարի և այլն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացում որոշում կայացվեց, որ հայկական կողմը շվեդական կողմին կներկայացնի իր համար առավել հետաքրքրություն ներկայացնող առողջապահական ոլորտները՝ գործնական համագործակցություն հաստատելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպող կողմերը ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. հոկտեմբերի 21